ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՏԱՐՈՆՈՒՄ ԵՎ ԱՐՇԱՐՈՒՆԻՔՈՒՄ

Պատմ. գիտ. դոկտոր Է. Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հայոց անկախ պետության վերականգնումը IX դարում մեծագույնս պայմանավորված էր հայ ժողովրդի պայքարով և Բագրատունիների՝ հայկական հողերը վերամիավորելու և թագավորությունը վերահաստատելու քաղաքականությամբ։ Այդ ուղղությամբ կատարած նրանց քայլերից էր Տարոնում և Արշարունիքում հաստատվելը, որը տեղի ունեցավ քաղաքական բարդ իրավիճակում։

Արաբական խալիֆայության դեմ բռնկված և համաժողովրդական պատերազմի բնույթ ստացած 774—775 թթ. հայ ժողովրդի ապստամբության ընթացքում նրա առաջնորդները՝ Տարոնի դարավոր տերեր Մամիկոնյանները երեք ճյուղի էին բաժանվել։ Ապստամբության սկիզբը դրեց Արտավազդ Մամիկոնյանը Կումայրիում ոչնչացնելով արաբ հարկահաններին, այնուհետև, ստիպված հեռացավ և իր զինակիցների հետ պատսպարվեց «յաշխարհն Եգերացւոց»[1]։ Մուշեղ Մամիկոնյանը «միաբանեալ ընդ իւր զոմանս ի նախարարացն Հայոց՝ ի բաց եկաց ի հնազանդութենէ Իսմայելի. և գտեալ զոմանս յորդւոցն Իսմայելի ի գաւառի իւրում և ի տան իւրում, որք եկեալ պահանջէին ի նմանէ զարիւնս ոմանց սպանելոց ի տոհմէ իւրեանց՝ խողխողէր զնոսա ի սուր սուսերի իւրոյ։ Եւ ինքն գաղթէր ամրոցն Արտագերոյ հանդերձ տամբ իւրով»[2]։ Տարոնում մնացել էր Սամուել Մամիկոնյանի եղբայր Շապուհը, որի մասին Վարդանը գրել է. «Բայց անկելոցն ի մեծ պատերազմին մնացորդք էին. այսոքիկ ... Սամուելի եղբայր մի Շապուհ անուն, իսկ Մուշեղայ՝ երկու որդիք և չորս դստերք. անդրանկին Շապուհ անուն»[3]։

Հայաստանում VIII դարի վերջում քաղաքական վիճակը բարդանում էր նաև Բագրատունիների պայքարով խալիֆայության դեմ ընդվզած և երկրում իշխանության ձգտող Ջահապյանների և, անուղղակի ձևով, վերջիններիս հովանավորող Մեհրուժան Արծրունու դեմ։ Եթե անդրադառնանք Արծրունյաց իշխանի ոչ հեռու անցյալին, նրա վարքագծի դրդապատճառները ավելի պարզ կդառնան։

Ղևոնդը գրել է. «Որ իբրև եհաս (Խուզայման, 786—787—Է. Դ.) ի քաղաքն Դուին՝ ընդ առաջ եղեն նմա ամենայն նախարարք Հայոց. ընդ առաջ լինէին նմա և իշխանք տանն Արծրունեաց Համազասպ և Սահակ և Մեհրուժան»[4]։

Ինչպես երևում է, Արծրունիները գլխավորում էին հայ նախարարներին[5], չնայած այդ ժամանակահատվածում պաշտոնապես ճանաչված «Հա-

---

1 Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց. Ս. Պետերբուրգ, 1887, էջ 128։ Ն. Ակինյանը ենթադրել է, որ Մամիկոնյանների այս ճյուղը ի վերջո ամփոփվեց Տայքում, ուր «ի ընն ունեին իրենք կալվածքներ» (տե՛ս նրա Մատենագրական հետազոտություններ. հ. Դ, Վիեննա, 1933, էջ 52)։

2 Ղ ևոնդ, էջ 139։

3 Վարդանայ վարդապետի Հաւաքումն պատմութեան. Վենետիկ, 1862, էջ 76։

4 Ղ ևոնդ, էջ 162։

5 Այս տեսակետից պերճախոս է նաև հետևյալ նկարագրությունը. «Իսկ բարեատեաց թշնամին տեսեալ զդեղադէշ վայելչութիւն փառաց նոցա և զբարեղարգութիւն աղատախումբ գնդին որ ընդ նոսա...» (նույն տեղում)։

յոց իշխան» չկար[6]։ Արծրունիները, ամենայն հավանականությամբ, օգտըվելով ստեղծված իրավիճակից, իրենց հերթին փորձում էին Հայաստանում առաջնային դիրք գրավել[7]։ Իսկ եղբայրներից գլխավորը Համազասպն էր, քանի որ հիշատակված է որպես «տէրն Արծրունեաց»[8]։

Պարզ է, որ հայ նախարարների ինքնիշխանությունը չէր կարող դուր գալ խալիֆայությանը։ Դա հատկապես զայրացնում էր արաբ ոստիկաններին, որոնք ի դեմս նրանց տեսնում էին իրենց տիրակալական շահերը ոտնահարող ախոյանների։ Նման իրավիճակ ստեղծվել էր դեռևս Տաճատ Անձևացու (781—785) ժամանակ։ Սակայն եթե Օթման ոստիկանը (783—785) չկարողացավ բացեիբաց հանդես գալ Տաճատի դեմ և միայն նենգությամբ իր հաշիվները մաքրեց նրա հետ, ապա այժմ, Խուզայման բիրտ ուժի դիրքից հաշվեհարդար տեսավ հայ նախարարներին գլխավորող Արծրունիների հետ, որոնցից կենդանի մնաց միայն Մեհրուժանը՝ մահմեդականություն ընդունելու գնով[9]։ Այդ քայլով Մեհրուժանը ամրապնդեց իր դիրքերը և ընդարձակեց իր տիրույթները, ինչպես նաև սկսեց ավելի ակտիվորեն միջամտել երկրի ներքին քաղաքական կյանքին։ Խալիֆայությունը նրա գործողությունները հանդուրժում էր, քանի որ նրան դիտում էր որպես հակակշիռ օրավուր հզորացող Բագրատունիներին։ Սակայն, ինչպես հայտնի է, խալիֆայությունը, ի վերջո, ստիպված էր հաշվի նստել Բագրատունիների հետ։

Այսպիսով, Աշոտ Բագրատունին և Մեհրուժան Արծրունին, որպես Հայաստանի այդ ժամանակաշրջանի ամենից խոշոր ավատական տների ներկայացուցիչներ, ձգտում էին որքան հնարավոր է ընդարձակել իրենց տիրույթների սահմանները, որով նրանք հնարավորություն կստանային գերիշխող դիրք գրավել երկրի քաղաքական կյանքում։ Այս տեսանկյունից գնահատելով Աշոտի և Մեհրուժանի գործունեությունը, կարելի է ասել, որ առաջինի՝ դեպի հայոց պետության վերականգնումը տանող ձեռնարկումները արդյունավոր էին, իսկ երկրորդի ընտրած ուղին կործանաբեր էր երկրի համար։

Բագրատունիների քաղաքական ասպարեզում գտնվելը այնպիսի ծանր ժամանակաշրջանում, երբ Հայաստանը հեծում էր խալիֆայության լծի տակ, նրանց երկրի կենսական շահերից բխող ավելի լայն ծրագրերի իրագործման տեղիք էր տվել, քան ուներ Արծրունյաց իշխանը, որի անփառունակ և ողբերգական ելք ունեցած գործունեության որոշ դրվագներ պահպանվել են Վարդան Արևելցու հաղորդումներում։ Նա գրել է, որ Մուշեղ Մամիկոնյանի զավակները «անկան յերկիրն Վասպուրական. զորս եսպան զերկուսին Մեհրուժան Արծրունի»[10]։

Այսպիսի ոճրագործությամբ Մեհրուժանը, շեշտելով իր հավատարմությունը, հաճոյանում էր խալիֆայությանը[11] և քաղաքական ասպարեզից հե-

---

6 Այն, որ Բագրատունիները այս ժամանակ խալիֆայության կողմից պաշտոնապես չէին ճանաչվել, երևում է նաև արաբական զորավար Կիպառոն Արդալայի դեմ Աշոտ քաջի (Մսակեր) կռվելու և հաղթելու փաստից (Վ ա ր դ ա ն, էջ 77)։

7 Արծրունիները արաբական գերիշխանության տարիներին առաջին անգամն էր, որ նման լայն ասպարեզ էին դուրս գալիս։ Ճիշտ է այդ բավականին կարճ տևեց, սակայն պետք է մեծ ազդեցություն թողած լիներ հատկապես Մեհրուժանի տիրակալական ձգտումների վրա, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը։

8 Ղ և ո ն դ, էջ 146։

9 Նույն տեղում, էջ 160—163։

10 Վ ա ր դ ա ն, էջ 76։

11 Նման եզրակացության կարելի է հանգել, ելնելով նույն տեղում արված Վարդանի մյուս նշումից, որ Մեհրուժանը Մուշեղի երկու զավակներին սպանեց «որպէս թէ ի պատճառս հօրն նոցա եղև աղէտն մեծ»։ Կարծում ենք այստեղ նկատի է առնված ոչ միայն ապստամբության ճնշումը (տե՛ս Գ. Գ ր ի գ ո ր յ ա ն. Տարոնի Բագրատունիների ֆեոդա-

ռացնելով Մուշեղ Մամիկոնյանի զավակներին, փաստորեն, Ջահապին հնարավորություն էր տալիս, առնվազն, Մուշեղի ժառանգությանը տիրանալու, ինչը Մեհրուժանին մի առ ժամանակ ձեռնտու էր։ Հենց այդ նպատակով էր Մեհրուժանը Մուշեղի աղջիկներից մեկին կնության տվել Ջահապին «թիկունս առնելով զնա»[12] պատրվակով։ Մեհրուժանը կարող էր օգտագործել նաև այն իրավիճակը, որը ստեղծվելու էր կենտրոնական Հայաստանում իր կողմից հովանավորված Ջահապյանների և հայոց հողերը միավորող Բագրատունիների բախման հետևանքով։ Սակայն Ջահապի ոտընձգությունները և Մեհրուժանի կորստաբեր ծրագրերը կասեցվում են Բագրատունի եղբայրների կողմից։

Վարդանը գրում է. «Ջահապ յափշտակեալ էր մասն ինչ յԱրշարունեաց, և խորհէր տիրել ի ձեռն կնոջն բոլոր աշխարհին, զայն առին յինքեանս Աշոտ և Շապուհ»[13]։ Ջահապը, կնոջ ժառանգությանը տեր դառնալու նպատակով, ինչպես նշել է Ն. Ադոնցը, հափշտակել էր Արշարունիքի մի մասը Արտազերս հոչակավոր ամրոցով, որտեղ ապստամբության ժամանակ մինչ Բագրևանդի ճակատամարտում սպանվելը ամրացել էր Մուշեղ Մամիկոնյանը իր ընտանիքով[14]։ Ասողիկը տեղեկացնում է. «Իսկ ըստ իշխանաց կարգին զկնի Սմբատայ, որդւոյ Աշոտոյ՝ Աշոտ որդի նորա, որ Մսակերն կոչիւր՝ ամս ի։ Սա գանձագին արար զգավառն Արշարունեաց յազգէն Կամսակարանաց, և զարքունիսն ի Կոգովտէ յԱրշարունիս փոխեաց»[15]։ Պարզ է, որ Արշարունիքից Ջահապին դուրս վռնդելուց հետո միայն Բագրատունիները կարող էին իրենց նստավայրը վերջնականապես տեղափոխել Կոգովիտից[16]։

Այլ իշխանների հետ 785 թ. Ներսես Կամսարականի[17] զոհվելուց հետո Արշարունիքի գնումը պետք է ձևական բնույթ կրեր, որպեսզի Բագրատունիները դրա օրինավոր տերերը ճանաչվեին։ Այդ դեպքում որպես վաճառող

լական իշխանությունը IX—X դարերում. Երևան, 1983, էջ 52)։ այլ ընդհանրապես խալիֆայության լծի դեմ Մամիկոնյանների գլխավորած ապստամբությունը, որը Մեհրուժանի ընչաքաղց ըմբռնման շրջանակներում դիտվում էր որպես երկրի կարգ ու կանոնի խախտում. աղետ, և նա, փաստորեն, մահապատժի ենթարկեց Մուշեղի զավակներին։

12 Վարդան, էջ 76։ Իգական գծով նախարարական հողային տիրույթների մասնատման նվաճողների վարած քաղաքականությունը նոր երևույթ չէր վաղ միջնադարյան Հայաստանում և այն սկսել էր դեռևս Հուստինիանոս I-ը (527—565) երկրի բյուզանդական տիրապետության տակ անցած մասում։ Իհարկե, բյուզանդական կայսրի համապետական միջոցառումներից բխող և հայոց նախարարական ժառանգական իրավունքը խարխլող այդ երևույթը այլ ժամանակագրական և ծավալային ընդգրկում է ունեցել, որի հետ Ջահապի առընչությամբ հիշատակվող դրվագը համեմատելի չէ, սակայն երկու դեպքում էլ նվաճողների նպատակը նույնն էր՝ տիրանալ հայ նախարարական տների ժառանգական հողերին։

13 Նույն տեղում։

14 Ն. Ադոնց. Պատմական ուսումնասիրություններ. Պարիս, 1948, էջ 59։ Բացի նշված զավակներից Մուշեղ Մամիկոնյանը գուցե նաև այլ ազգականներ է ունեցել, որոնք կարող էին Բագրևանդ անցած լինել։

15 Ստեփանոսի Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական. Ս. Պետերբուրգ, 1885, էջ 106։

16 Ինչպես նշել է Ն. Ադոնցը, Բագրատունիները սկզբնապես պետք է հաստատվեին Արշարունիքի այն մասում, որտեղ Բագարանն էր (Պատմական ուսումնասիրություններ, էջ 59)։

17 Ղևոնդ, էջ 161։ Ս. Կոգյանը, հայ նախարարների Դերբենդի կողմերը գնալու տարեթիվ համարելով 784/5-ը, առանց հիմնավորելու ենթադրել է, թե Կամսարականները 783 թ. վաճառել էին իրենց հողերը (Ս. Կոգյան. Կամսարականները «Տեարք Շիրակայ և Արշարունեաց». Վիեննա, 1926, էջ 168—169)։ Ի դեպ, պետք է վրիպակ համարել այն, որ գիտնականը նույն տեղում Մուշեղի փոխարեն Արտավազդին է հիշատակել. Վարդանի վերոհիշյալ հաղորդման կապակցությամբ։

կողմ կարող էր հանդես գալ Կամսարականների տան նույնիսկ որևէ ոչ նշանավոր անդամ[18]։

Կ. Թումանովը կարծում է, թե Աշոտ Մսակերը պատսպարվել էր Սպերում և այնտեղի արծաթի հանքերի շնորհիվ Կամսարականներից կարողացավ գնել Արշարունիքը և Շիրակը[19]։ Աշոտ Մսակերը հաստատվել էր Տայքում և հիմնել Կալմախը (Վարդանի երկի մեզ հասած տեքստում՝ Կամախ), իսկ Սպերը Վարդանը հիշատակել է միայն համեմատելու համար Աշոտի գործունեությունը Բյուրատյան Սմբատի հետ[20]։ Ինչպես հետևում է Վարդանի հաղորդումներից, Աշոտը աստիճանաբար միավորում էր հայկական հողերը՝ ծանր պայքարի մեջ մտնելով օտար նվաճողների հետ։ Իսկ Սպերի առնչությամբ հետաքրքիր է ևս մեկ փաստ, որը կապվում է Աշոտ Մսակերի եղբոր՝ Շապուհի որդի Աշոտի հետ։ Ասողիկը գրել է, որ Թեոփիլոս կայսրը (829—842) «գնաց ի խաղտիս... և տուեալ ղհիւպատաւորութեան պատիւն, այսինքն՝ ապուհիւպատ պատրկութիւն՝ Աշոտոյ որդւոյ Շապհոյ և թողու ի Սպեր գաւառի»[21]։

Հ. Նալբանդյանի կարծիքով, Կամսարականները Շիրակը վաճառեցին Աշոտ Մսակերին այն պատճառով, որ Ջահապ Վասպուրականի կողմից հետո տիրացել էր Արշարունիքին և իր դիրքերն ամրապնդել ամուսնանալով Մամիկոնյան իշխանուհու հետ[22]։ Այնինչ, Ներսեհ Կամսարականը Բագրևանդ գավառի Արձնիի ճակատամարտից (775) տասը տարի անց է սպանվում, իսկ Ջահապի ամուսնությունն էլ տեղի ունեցավ դրանից միառժամանակ անց։

Անհրաժեշտ է նշել, որ Բագրատունիները հենց այնպես, առանց պատճառի չէին կարող թողնել իրենց հայրենի կալվածքը՝ Կոգովիտը, որի մասին Ղևոնդը գրել է. «Եւ շինէր (Աշոտ Բագրատունին՝ 685—689—է. Դ.) զեկեղեցին Դարիւնից (Կոգովտում—է. Դ.) յիւրում ոստանին...։ Ածէին զիշխանն (Նոյն Աշոտին—է. Դ.) ի Կոգովիտ կարեվէր խոցմամբն, որ ի նոյն մահիճս վախճանեցաւ փառաւորապէս, և թաղեցաւ ի կայս հանգստեան իւրոյ ի գիւղն Դարիւնս...։ Եւ ժողովէր (Աշոտ Կոյր Բագրատունին՝ 732—748—է. Դ.) զաղխս տան իւրոյ յամրոցն Դարիւնից, և զտիկինն և զամենայն ընտանիս իւր. և թողոյր պահապան ի վերայ ամրոցին պահել...։ Վախճանէր (Նոյն Աշոտը—է. Դ.) բարւոք ծերութեամբ, և եդեալ ի տապանի փառաւորապէս ի կայս հանգստեան իւրոյ ի գիւղն Դարիւնս»[23] և այլն։ Որքա՞ն զորեղ

---

18 Ինչպես նշել է Ն. Ադոնցը, Կամսարականների տոհմը սպառվել էր և Աշոտ Մսակերը Արշարունիքի մի մասը գնեց նրանց ժառանգներից (նշվ. աշխ., էջ 59)։ Նույն տեղում Ներսեհ Կամսարականի մահը դրված է 775 թ., որը պետք է տպագրական վրիպակ լինի։

19 Toumanoff. Studies in Christian Caucasian History. Georgetown, 1963 p. 323—324, n. 81.

20 Վարդան, էջ 76—77։

21 Ասողիկ, էջ 144։

22 Հ. Նալբանդյան. Արաբացի ոստիկանները Հայաստանում.—ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», (հաս. գիտ.), 1956, № 8, էջ 117։

23 Ղևոնդ, էջ 16, 18, 119, 124։ Սեբեոսի հաղորդումներից երևում է, որ չնայած 591 թ. բաժանումից հետո Կոգովիտը մնացել էր Հայաստանի՝ Բյուզանդիային անցած արևմտյան մասում, իսկ Սմբատ Խոսրով Շում Բագրատունին պարսից ծառայության մեջ էր և իր որդու՝ Վարազտիրոցի հետ երկար ժամանակ գտնվում էր Պարսկաստանում (նա Հայաստան վերադարձավ կարճ ժամանակով՝ 607/8 թ.), սակայն մահվանից (618 թ.) հետո նրա մարմինը բերեցին Հայաստան և հողին հանձնեցին իր հայրենի Կոգովիտի կալվածքում, որտեղ շարունակում էին ապրել նրա հարազատները և ազգականները (Սեբեոս, էջ 104)։ VII դարի երկրորդ քառորդում Կոգովիտի Բագրատունիները զգալի դեր խաղացին վերամիավորվող Հայաստանի քաղաքական կյանքում։ Երկար դեգերումներից հետո Տայքում հաստատված և այնտեղ էլ մահացած Վարազտիրոցի դին նույնպես բերեցին և հողին հանձնեցին Կոգովիտում (Նույն տեղում, էջ 144)։

պետք է լինեին պատճառները, որպեսզի Բագրատունիները ստիպված հեռանային Կոգովիտից։ Այդ պայմանավորված էր թե՛ արաբական ցեղերի հայտնվելով և թե՛ Արծրունիների առաջխաղացմամբ։ Այն, որ Արծրունիները այդ կողմերում բավականին ակտիվացել էին, երևում է թեկուզ այն փաստից, որ նրանք միաժամանակ գտնվում էին Դվինում[24], ուր Վասպուրականից ճանապարհը անցնում էր Գառնիձոր լեռնանցքով և Կոգովիտով։

Արաբական ցեղերի-ներխուժման հետևանքով Բագրատունիները Գնունիներին նրանց հայրենական կալվածքից՝ Աղիովիտից տեղափոխեցին Տայք[25]։ Իսկ ինչպես հայտնի է, Աղիովիտը հեռու չէր Կոգովիտից։ Կարծում ենք, որ Մեհրուժան Արծրունին պակաս դեր չէր խաղացել Կոգովիտից Աշոտի հեռանալու գործում։ Մահմեդականություն ընդունած Մեհրուժանին կարող էին աջակցել ոչ միայն Ջահապը, այլև հիշյալ արաբական ցեղերը։ Այլ պարագաներում Բագրատունիները, թերևս, կկարողանային տիրել Կամսարականների տիրույթներին առանց ձեռքից Կոգովիտը բաց թողնելու։ Ընդհանուր առմամբ, խալիֆայության ներկայացուցիչների և Ջահապյանների դեմ մղած պայքարում Բագրատունիներին հաջողվեց հաստատվել Արշարունիքում, Շիրակում, Աշոցքում և Տայքի մի մասում[26]։

Ինչպես երևում է, Աշոտ Մսակերը միաժամանակ չէր կարողացել իրեն ապահով զգալ Հայաստանի կենտրոնական գավառներում, ուստի իրեն նըստավայր էր ընտրել նախակառույց Կալմախը Տայքում, այնտեղից հետևելով և միջամտելով երկրի անցուդարձին։ Նա Գնունիներին տեղափոխեց Տայք, սակայն ինքը չկարողացավ տեր դառնալ նրանց տիրույթներին։ Այլ էր վիճակը Տարոնում։

Լեոն ենթադրել է, որ Սամուել Մամիկոնյանը, բացի Սմբատի կնոջից (Աշոտ Մսակերի մայրը), որը իր դուստրն էր, ուրիշ ժառանգ չուներ և նրա կալվածքներն անցան նրա թոռներին՝ Աշոտին ու Շապուհին Բագրատունյաց տոհմից[27]։ Նա իրավացի էր Բագրատունիներին այս տեսանկյունից դիտելով Մամիկոնյանների ժառանգներ, սակայն, անկասկած, կենդանի էր մնացել Սամուելի եղբայրը՝ Շապուհը։ Այս դեպքում Բագրատունիների ժառանգական իրավունքները Տարոնի վրա կարող էին ուժի մեջ մտնել միայն Շապուհ Մամիկոնյանի կողմից Տարոնը կամավոր հանձնելուց[28], կամ նրանից գրավելուց և կամ էլ նրա մահվանից հետո։

Վարդանի երկից իմանում ենք, թե Տարոնին տիրելու համար ինչպես է ընթացել Բագրատունիների պայքարը Ջահապյանների դեմ։ «Իսկ Ջահապն ապստամբեալ յիւրմէ իշխանէն, գայ նստի ի Դուին բռնութեամբ, որդւոյ իւրով Աբդլայիւ։ Եւ իբրև ետես զայն կիւրապաղատն Աշոտ, առաքէր առ կայսրն Լեոն օգնել նմա, և նա չէր պարապ. զի Միռայէլ ոմն շանացեալ սպանանել զնա, և ոչ յաջողեալ գործոյն, այլ իմացեալ կայսերն՝ կամեցաւ

24 Դվինը, որպես խալիֆայության վարչական կենտրոններից մեկը, արդեն սկսել էր իր տեղը զիջել Պարտավին։ Այդ երևում է նաև այն փաստից, որ խուղայմային դիմավորողները միայն հայ նախարարներ էին։ Պարտավը վերջնականապես Արմինիայի կուսակալի նստավայր դարձավ խալիֆ Հարուն ալ-Ռաշիդի (786—809) ժամանակ, որը «ունէր հակառակորդ զեղբայր իւր Ովբեղա (788—791). և վասն հակառակութեանն որ ընդ միմեանս՝ բաժանէր ե տայր եղբօր իւրում զԱտրպատական և զՀայս հանդերձ Վրօք և Աղուանիւք» (Ղ և ո ն դ, էջ 166)։

25 Վ ա ր դ ա ն, էջ 77։

26 Նույն տեղում, էջ 76—77։

27 Լ ե ո. Հայոց պատմություն. հ. Բ, Երևան, 1967, էջ 412։

28 Շապուհը Աշոտ Մսակերի պապի՝ Սամուելի եղբայրն էր։ Տեսնելով Տարոնի վրա կախված վտանգը, նա կարող էր անցնել Աշոտի հովանավորության տակ այնպես, ինչպես արեցին Գնունիները, այն տարբերությամբ, որ Աշոտ Մսակերը չկարողացավ իր ձեռքում պահել վերջիններիս տիրույթները։

սպանանել զնա, և աղաչեցեալ ի թագուհւոյն՝ մինչև անցցէ զատկին օր, վասն որոյ եդաւ ի բանտի. և էր բանտապահն բարեկամ Միքայելի, որ կաշառեաց զմանկլավիկքն, որք են սենեկապանք արքայի և մօտակայք. և սոքա յանկարծակի սրովք դիմեցին ի վերայ կայսերն յեկեղեցին ի ժամ պատարագին, և նորա փախուցեալ առ սեղանն բուռն եհար զնմանէ. իսկ նոքա անողորմ դազանաբար սպանին զնա ի տեղւոջն։ Եւ թագաւորեաց Միքայէլն. Ելանէր ի խնդիր մեծ զօրավարին Մանուելի Մամիկոնենոյ. և նորա աճապարեալ հարիւր և հիւսուն արամբ անկանի ի Կամախ, և անտի առ Մամուն իշխանն Իսմայելի, որ սպանեալ զեղբայրն Մահմէտ՝ իքնքն տիրէր Տաճկաց... բայց տունն Ջահապայ զօրացեալ ի Դուին, իբրև հինգ հազարաւ կամեցան գնալ ի Տարօն[29], յիշխանութիւն Աշոտոյ որդւոյ Սմբատայ. իսկ ողջախոհն այն և քաշն հաւատացեալ՝ երկերիւր հնծելօք և երեք հարիւր հետեւակօք ել ընդդէմ նոցա չմնացեալ հաւաքման զօրացն, և կոտորեաց ի նոցանէ զերեք հազարսն, ե հասեալ ի բանակս նոցա՝ էառ զամենայն մեծութիւնս նոցա, և դարձան խնդութեամբ փառաւորելով զՔրիստոս։ Եւ Շապուհ եղբայր նորա ասպատակեալ ի կողմանս Դունայ, և առեալ աւար բազում դառնայր. և թափեցաւ զօրն ի քաղաքէն զհետ նորա, և քաղաքացիքն դիմեալք ի վերայ Աբդիմէլիքի, սպանին զնա, և ածին զդուռն քաղաքին. և դարձեալ զօրացն և իմացեալ դեղեայն, չքոտեցան և կորեան ի միջոյ»[30]։

Այստեղ նշված անցքերը կարելի է մի քանի կետերի բաժանել. 1) Ջահապը ապստամբում է և իր որդու հետ գրավում Դվինը, 2) կյուրապաղատ Աշոտը (813—830) Ջահապյանների դեմ պայքարելու համար օգնության խնդրանքով դիմում է կայսր Լևոն V-ին (813—820)[31], 3) Լևոն V-ի սպանությունից հետո կայսր է դառնում Միքայել II-ը (820—829), 4) «Ջահապի տան» զորքը շարժվում է Աշոտ Մսակերին պատկանող Տարոնը գրավելու, սակայն ճանապարհին վերջինիս հարվածներից պարտվում է, 5) Աշոտի եղբայրը՝ Շապուհը արշավում է Դվինի կողմերը, իսկ քաղաքի բնակչությունը սպանում է Ջահապի որդուն՝ Աբդ ալ-Մալիքին։

Հետազոտողները այն կարծիքին են, որ նշված առաջին և վերջին կետերի միջև ընկած ժամանակաշրջանն ընդգրկում էր 813—820 թթ.։ Լևոն Աշոտ Մսակերի կողմից Ջահապին պարտության մատնելու ժամանակը դրել է 820 թ.[32], իսկ Կ. Թումանովը նշել է. «820 թ. Մանազկերտի կայսիկը դրոհեց Դվինի վրա»[33]։ Ըստ Յ. Մարքվարտի, Տարոնը՝ Մամիկոնյանների հին աիրույթը, Ջահապյանների տան դեմ մղված պայքարում ևս պետք է ընկած լիներ Աշոտի իշխանության տակ և մոտավորապես 820 թ. ուղղակի որպես նրա իշխանություն էր դիտվում»[34]։ Հ. Նալբանդյանը, հենվելով Աբդ

---

29 Ն. Ակինյանը առաջարկել է կարդալ «Դարիւնոս» (Մատենադրական հետազոտություններ. հ. Դ. Վիեննա, 1930, էջ 324), որը անհավանական է նաև այն պատճառով, որ մինչ այդ, ինչպես վերը տեսանք, Բագրատունիներն արդեն հեռացել էին Կոդովիտից։

30 Վարդան, էջ 77—78։

31 Ա. Տեր-Ղևոնդյանը նշել է, որ ամբողջ Արմինիայի համար այնպիսի վտանգավոր վիճակ էր ստեղծվել Աբդ ալ-Մալիքի գործունեության հետևանքով, որ Քարթլիի իշխան Աշոտ կյուրապաղատը դիմել Լևոն V-ի օգնությանը, որը, սակայն, սպանվեց (А. Тер-Гевондян. Армения и Арабский халифат. Ереван, 1977, էջ 128)։ Ինչպես երևում է Վարդանի հաղորդումներից, Աշոտ կյուրապաղատը Լևոնին դիմել էր Աշոտ Մսակերին օգնության հասնելու համար։ Ն. Ադոնցը իրավացիորեն նշել է, որ «Աշոտի միջամտությունը նշան է, որ տոհմական կապերը տակավին սերտ էին Կղարջքի և Շիրակի Բագրատունիների մեջ» (Պատմական ուսումնասիրություններ, էջ 65)։

32 Լեո, նշվ. աշխ., էջ 417։

33 The Cambridge Medieval History. V. IV, Cambridge, 1966, p. 609.

34 J. Markwart. Südarmenien und die Tigrisquellen. Wien, 1930, S. 294.

ալ-Մալիքի անունով հայտնի դրամների (812—813) և Վարդանի հաղորդման վրա, Ջահապի որդու գործունեությունը դնում է 813—820 թթ. միջև[35]։

Ջահապյանների և Բագրատունիների միջև տեղի ունեցած պայքարի և այս փուլում առաջինների պարտության ժամանակը ճշգրիտ որոշվում է Աբդ ալ-Մալիքի մասին եղած տեղեկությունների հիման վրա, որոնք խմբավորվում են 812/13 թ. շուրջը[36]։ Աբդ ալ-Մալիքը եկավ և պաշարեց կուսակալ Թահիր իբն Մուհամմադ աս-Սանանիին Պարտավում, սակայն շուտով օգնություն հասավ Մամուն խալիֆից, Թահիրը ազատվեց, իսկ Աբդ ալ-Մալիքը ներման արժանացավ[37]։

Ինչպես նշել է Մ. Կանարը, Թահիրը պարսկական զորավար էր և 809 թ. Հարունի մահվանից հետո վերջինիս որդիների՝ ալ-Ամինի և ալ-Մամունի միջև ծագած քաղաքացիական կռիվներին մասնակցում էր որպես վերջինիս կողմնակից և 813 թ. նոր գահակալած խալիֆ Մամունը Բաղդադի հաջող պաշարման համար նրան Խորասանի կառավարիչ նշանակեց[38]։ Սակայն մինչև Խորասան մեկնելը Թահիրը, ինչպես երևում է դեպքերի ընթացքից, ուղարկվել էր Արմինիա կուսակալություն՝ կենտրոնախույս ուժերը զսպելու համար։

Հետազոտողները իրենց ուշադրությունը կենտրոնացրել են Աբդ ալ-Մալիքի վրա, այնինչ, ինչպես երևում է Վարդանի հաղորդումից, նրա հայրը՝ Ջահապը ակտիվորեն աջակցում էր իր որդուն։ Ուրեմն, հայր և որդի տիրանալով Դվինին այնուհետև կարող էին նաև այլ ուղղություններով գործել։ Նկատի ունենալով, որ Թահիրը եկել էր Պարտավ 813 թ. և նրան պաշարել էր Աբդ ալ-Մալիքը, կարելի է ասել, որ Տարոնի ուղղությամբ գնացել էր Ջահապը։ Վարդանի հաղորդումից նաև երևում է, որ Աշոտի և Ջահապյանների զորքերի միջև ճակատամարտը տեղի էր ունեցել Տարոնից դուրս, և այդ ժամանակ էլ պետք է սպանված լիներ Ջահապը։

Եթե այդ անցքերը տեղի էին ունեցել 813 թ., ի՞նչն է պատճառը, որ հետազոտողները դրանց տևողությունը երկարաձգում են մինչև 820 թ.։ Վարդանի հաղորդումը բաժանելով կետերի, տեսանք, որ երկրորդ և երրորդ կետերը պատմիչը այնպես է շարադրել, որ թվում է, թե մեկը տրամաբանորեն բխում է մյուսից։ Այնինչ, մի կողմից առաջին և դրանից հետևող երկրորդ կետի և, մյուս կողմից, երրորդ կետի միջև 6—7 տարի է ընկած[39], իսկ չորրորդ կետում շարադրանքը նորից կապվում է առաջին կետի ժամանակաշրջանի հետ։ Ուրեմն, հետազոտողների մի մասը, ուղղակի հետևելով Վարդանի շարադրանքին (առանց ժամանակագրական փուլերի բաժանելու) և իմանալով Աբդ ալ-Մալիքի ոստիկանության և Լևոն V-ի մահվան տարեթվերը, նկարագրված անցքերը դրել է 813—820 թթ., իսկ մյուս մասը, կարծելով, թե այդ ամենը կատարվել է Լևոնի վերջին տարում, երբ նա պայքարում էր Միքայել II-ի դեմ, խոսում է միայն 820 թ. մասին։

Ժամանակագրելով Վարդանի հաղորդումները՝ հետևյալ պատկերն է

---

35 Հ. Նալբանդյան. նշվ. աշխ., էջ 118։ Նրան են հետևում Ա. Տեր-Ղևոնդյանը (Армения и Арабский халифат, էջ 127—128) և Գ. Գրիգորյանը (Տարոնի քաղաքական վիճակը VIII դարում.—«Լրաբեր հաս. դիտ.», 1975, № 9, էջ 47—48, տե՛ս նաև՝ Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը, էջ 54—55)։ Ս. Մելիք-Բախշյանը Ջահապի և Աշոտ Մսակերի միջև տեղի ունեցած պայքարի բոլոր դրվագները դրել է 820 թ. (Հայաստանը VII—IX դդ., Երևան, 1988, էջ 349)։

36 Հ. Նալբանդյան. նշվ. աշխ., էջ 118։ Ա. Տեր-Ղևոնդյան. Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում. Երևան, 1965, էջ 68—71։

37 Ն. Ադոնց. նշվ. աշխ., էջ 62։ А. Тер-Гевондян. Указ. соч., с. 127.

38 The Cambridge Medieval History, v. IV, p. 701.

39 Չէ որ նաև անտրամաբանական է մտածել, որ Աշոտ կյուրապաղատը այդ դեպքերից միայն 6—7 տարի անց դիմեց Լևոն V-ին օգնության համար։

սաստվում. 813 թ. ապստամբելով, Ջահապը իր որդու՝ Աբդ ա-Մալիքի հետ դրավում է Դվինը հնացող նպատակներով։ Աշոտ Կյուրապաղատը. որպես Շիրակի Բագրատունիների հավատարիմ բարեկամ, դիմեց Միքայել I-ին (811—813) հաջորդած Լևոն V-ի օգնությանը, որը, սակայն նոր էր գահակալել և առայժմ զբաղված էր Բյուզանդիայի ներքին և արևմտյան գործերով։ Իսկ Վտրդանը Լևոն V-ի այդ զբաղվածությունը բացատրել է նրա և Միքայել II-ի միջև ծագած հակամարտությամբ[40] և հենց այս մասին պատմիչի հաղորդումն է, որ հետաղոտողներին կանգնեցրել է դժվարության առջև ու նրանք Բագրատունիների և Ջահապյանների միջև ընթացած պայքարի այդ փուլը հասցրել են մինչև 820 թ.։

Աշոտ Մսակերը հայկական հողերի միավորման գործը ղեկավարում էր նստավայր ընտրելով Տայքում, որը աշխարհագրական դիրքով նպաստավոր էր Բագրատունիների քաղաքական ծրագրերը իրականացնելու համար։ Նրան հարևան էր կյուրապաղատ Աշոտը, որը IX դարի առաջին տասնամյակներում «տիրեցաւ ի Կղարջայ մինչև ի Տփղիս, լեռնակողմամբն հանդերձ»[41]։ Նկատի ունենալով Աշոտ կյուրապաղատի դիրքորոշումը Ջահապյանների դեմ մղված պայքարում, կարելի է ասել, որ Աշոտ Մսակերը թիկունքից իրեն ապահով կարող էր զգալ։ Մյուս կողմից, Տայքը հարևան էր Բյուզանդիայի խաղտիք բանտկաթեմին։ Ճիշտ է, Լևոն V-ը չկարողացավ միջամտել Ջահապյանների դեմ Բագրատունիների մղած պայքարին, սակայն, ինչպես երևում է, արաբական իշխանությունների և տարբեր ներկայացուցիչների դեմ մղած պայքարում Բագրատունիները կայսրությունից օգնություն ստանալու ակնկալիքներ ունեին։

Աշոտ Մսակերը արդեն Տարոնի տերը պետք է լիներ[42], երբ պաշտոնապես «Հայոց իշխան» ճանաչվեց[43]։ Ուրեմն, Շապուհ Մամիկոնյանի (Սամուել Մամիկոնյանի Եղբոր) իշխանությունը Տարոնում ժամանակագրորեն կարող էր տևած լինել մինչև IX դարի սկզբները։

Այսպիսով, արաբական խալիֆայության դեմ բռնկված 774—775 թթ. համաժողովրդական հուժկու ապստամբությունը նոր փուլ ազդարարեց Հայաստանի հետագա քաղաքական զարգացման ընթացքում, որի գագաթնակետը հանդիսացավ հայոց պետականության վերականգնումը ի դեմս Բագրատունիների թագավորության։ Բագրատունիների կենտրոնաձիգ քաղաքականության հիմնաքայլերից էր VIII դարի վերջից—IX դարի սկզբներից հայկական հողերի վերամիավորումը։

---

40 820 թ. դեկտեմբերի 24-ին Միքայել II-ը կայսր հռչակվեց։ Միքայել II-ի ժամանակաշրջանը պատմիչի կողմից խնդրո առարկա անցքերին մոտեցնելը կարող էր նաև հետևանք լինել, նույնանուն կայսրի՝ Միքայել I-ի (811—813) Լևոն V-ին նախորդելու իրողության։

41 Վարդան, էջ 78։

42 Դ. Դրիդորյանի կարծիքով Տարոնը Բագրատունիներին էր անցել VIII դարի վերջերին կամ IX դարի սկզբներին, մինչև 804 թ., մինչ խալիֆայության կողմից Աշոտ Մսակերի՝ հայոց իշխան ճանաչելը (Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը, էջ 55)։

43 Հ. Նալբանդյանի կարծիքով Աշոտ Մսակերը խալիֆայության կողմից «Հայոց իշխան» ճանաչվեց 806 թ. (նշվ. աշխ., էջ 117), իսկ, ըստ Ա. Տեր-Ղևոնդյանի՝ 804 թ. (նշվ. աշխ., էջ 126)։

УТВЕРЖДЕНИЕ БАГРАТИДОВ В ТАРОНЕ И АРШАРУНИКЕ

Доктор ист. наук Э. Л. ДАНИЕЛЯН

Резюме

Восстановление армянского независимого государства в IX веке было обусловлено борьбой армянского народа против чужеземного владычества и исходящей из нее политикой Багратидов, направленной на объединение армянских земель и воссоздание армянского царства. В своей центростремительной деятельности Багратидам удалось пресечь действия стремившихся к власти Джаххафидов и покровительствовавшего им Меружана Арцруни. Сообщение Вардана Аревелци о событиях, связанных с борьбой Ашота Мсакера Багратуни против Джаххафа и его сына Абд ал-Малика, датируется 813-м годом, а не промежутком времени, охватывающим 813—820 гг., как считают некоторые исследователи. Багратиды, перенесшие все тяготы управления страной периода владычества Арабского халифата, умудренные опытом тяжелейших испытаний, целенаправленно проводили политику централизации армянских земель, завершившуюся созданием армянского царства Багратидов.